№ 18 ԹԻՖԼԻՍ ՇԱԲԱԹ ՄԱՅԻՍ 20 1895 ԹԻՖԼԻՍ ՇԱԲԱԹ ՄԱՅԻՍ 20 № 18

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

«ՉԱՎԻՂԻ» տարեկան գինը 10 ղրան, կէս տարուանը 6 ղրան։ Առանձին համարները 5 շահի։

Արտասահման տարեկան 8 ֆր. կամ 3 ռուբլի կէս տարուանը 5 ֆր. կամ 2 ռուբլի։

Արտասահմանից փողի համար պիտի դիմել հետևեալ հասցէով. Черезъ Баку въ Энзели Россійской ИМПЕРАТОРСКОЙ Миссіи въ Тегеранѣ пер. Бекъ-Назарову.

ՉԱՎԻՂ

«ՉԱՎԻՂԸ» ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ՏԱՐԵԿԱՆ 50 ՀԱՄԱՐ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

«ՉԱՎԻՂԻ» խմբագրութիւնը բաց է 10-ից մինչև 2 ժամը. (բացի կիրակի և ազգ օրերից

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուով՝ իւրաքանչիւր բառին մի անգամուայ համար 1 շահի։ Արտասահմանի յայտարարութիւնները բառին 1 կոպէկ։

Նամակների, նաև Պարսկաստանի բաժանորդագրութեան՝ հասցէ. Rédaction «CHAVIGH» Téhéran. (Perse)

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԾԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Դպրոցների տնտեսական հարցը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Թէհրան գալիք ուսուցիչներին. Բաց Նամակ. Նամակ Դավրէժից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Կովկասից. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—Յայտարարութիւններ.— ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Անկարգութիւններ Գ. ձեմարանում։

ԴՊՐՈՑՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԸ

III

Աշակերտների համար, ծնողների վճարելիք թոշակները կարող են համարվիլ մի դպրոցի եկամուտի երկրորդ մեծ աղբիւրը. եթէ եկեղեցւոյ տուածը չը բաւականանայ կրթական ծախսը ծածկելու համար։

Մեր մէջ, մանաւանդ Թիւրքայ-Հայաստան և պարսկայ-Հայաստան, սովորութիւն է դպրոցի վրայ նայել մի այնպիսի մանկանոցի վրայ, ուր պիտի ուղարկել մանր տղաներին, նրա տուած նեղութիւններից տան մէջ ազատելու համար։ Մի մայր կամ մի հայր երբ ազատվում են մանուկի չարութիւններից, իսկոյն նրան դպրոց են տանում, որովհետև վճարելու ոչինչ չը կայ. իսկ այնտեղ կան վարժապետներ որոնք կը պահպանեն իրենց մանուկը. դպրոցական պիտոյքները հոգալ՝ հարիւրից մի ծնող հազիւ իրը պարտք է համարում, մինչ շատերը նրա համար ծախսած փողը կորած փող համարելով, դժուարանում են հոգալ և ահա, մանուկը ամիսներով մի գրքի կամ մի քանի թերթ թղթի համար, վարժապետի նախատինքները, ծնողներից մուրալու ամօթն ու տանջանքն է ստիպվում կրել։ Այստեղից առաջանում է մի շարք չարիքներ թէ դպրոցի, թէ ուսուցչի և թէ ուսանող մանուկի համար։

Երբ մանուկը դպրոց է մտնում, զգալով որ իրեն ուղարկել են այդտեղ որպէս զի ազատուեն իր խաղերից, չարութիւններից,—նա երբէք մտքին չէ բերում թէ պէտք է ուսանել. կրթուել. ինչ որ էլ ուսանում է—զօռով է լինում, ստիպմամբ է որ անում է. դրա համար է որ պարսկահայերի ուսուցիչները անդադար գանգատվում են աշակերտների անուշադրութիւնից, ծուլութիւնից, անհոգութիւնից, եթէ չեն կամենում ծեծը գործածական դարձնել։ Երբ տուն է գնում մանուկը, ծնողները երբէք չեն հետաքրքրվում թէ ինչ է ուսել իր որդին, այլ թէ ինչու է շուտ եկել, ինչու է շորերը պատառոտել. շատ անգամ էլ որդուն չէ թողնում մի բառ արտասանել, վախենալով որ թղթի կամ գրքի փող պիտի դուրս գայ իր գրպանից։

Երբ մանուկը դպրոց է մտնում, զգալով որ իրեն ուղարկում են միմիայն գլխից «ուաղ անելու» համար և ոչ ուսանելու՝ նա ինքն էլ ուսանելու վրայ նայում է որպէս մի ստիպողական բանի վրայ և որպէս բժշկի դառը դեղ է, որ կլանում է նրան, չը կարողանալով ըմբռնել, թէ ինչու այդ մարդիկ—վարժապետները արիւն— քրտինք են թափում նրանց բան սովորեցնելու համար. նա էլ «ուաղ անելու» համար է որ մի քիչ պարապում է։

Այսպէս ուրեմն դպրոցը ներկայանում է որպէս մի տեղ ուր ծնողները ուղարկում են իրենց մանուկներին նրանցից ազատ մնալու համար ամբողջ օրը. իսկ մանուկները այդ շատ լաւ հասկանալով, դպրոցում իրենց տրուած ուսման վրայ նայում են որպէս պարապ ժամանակուայ խաղալիքների վրայ։

Ի՞նչ է դորա պատճառը։ Խորապէս զննելով, սրա պատճառն էլ, որպէս շատ այլ բաների, գտնվում է տնտեսական հանգամանքի մէջ։ Երկու հանգամանք է, որ ծնողին դնում է իր որդու ուսումով չը հետաքրքրվելու դրութեան մէջ. առաջինը այն է, որ նա ոչինչ չը վճարելով այդ բանի համար, չէ էլ հետաքրքրվում նրանով, մտածելով որ ինչ որ էլ օգուտ չունենար, գոնէ իր կնոջը ազատած կը լինէր մանուկի չարութիւններից. իսկ երկրորդ նա է, որ պարբերաբար ոչինչ չը վճարելով դպրոցին, իր մանուկի ուսման գործը նրա ուղղը չէ գրաւում որպէս մի գործ որի մասին պիտի հոգ տանէր, որին պիտի հետևէր։ Շատերը կան որ փող տուած չը լինելով իրաւունք չեն համարում՝ դպրոց մըտնել և կամ իր տղայի դպրոցից դուրս բերած արդիւնքովը հետաքրքրուել։ Կան ուրիշ հանգամանքներ էլ. օրինակ. ծնողը չէ հետաքրքրվում ոչ դպրանոցի դրութեամբ և ոչ էլ վարժապետներով, վախենալով որ դպրոցը փող չունենայ և իրենից էլ փող ուզեն. վախենալով որ իր որդին գրքի, թղթի փողի համար իր «զահլան» կը տանի և այլն։ Այսպէս նա սովորում է դպրոցի վրայ նայել որպէս մի ձրի հիմնարկութեան վրայ, ուր կարելի է մանուկներին տաւուօտից մինչև երեկոյ ուղարկել, գլխիցը ուաղ անելու համար. մանաւանդ երբ կարելի է քիչ խիստ լինելով շատ շատ մի քանի շահի ծախս միայն ունենալ նրա դաստական պիտոյքների վրայ։

Մենք չենք մտնում աւելի խորքերը։ Թէհրանի Հայկազ. դպրոցը (միւս խալֆայանոցը մենք դպրոց չենք համարում) իրը պարզ օրինակ դրան՝ կանգնած է մեր առջև։

Տարիների ընթացքում նա պահել է ոչ թէ նրանց ծախքով որոնք որդիներ ունին այնտեղ, այլ այն փոքր ի շատէ զարգացած օտարականների շնորհիւ, որոնք սովորել են տեսնել դպրոցների տուած օգուտը և հասկանալ թէ որ աստիճան մեծ դեր է խաղում ուսումը կեանքի մէջ։ Այդ դպրոցը, կրկնում ենք, իր եկամուտները ունեցել է յաճախ այնպիսիներից, որոնք որդիներ չունեն այնտեղ. նրա մասին հոգացել են այնպիսիները, որոնք իրենց մանուկներին չեն ուղարկում այդ դպրոցը։ Մինչդեռ իրենց մանուկները այնտեղ ունեցողները սարեկան մի քանի թուման տուրքի համար ասնջել են, մաշել հոգաբարձուների կոկորդը, ստիպելով նրանց խընդրել, աղաչել, երկար յորդորներ կարդալ..., այդ կերպով տրուած փողերը, այդպիսի դժուարութեամբ հաւաքուած դրամը բայց դարձեալ չօգնեց այդ միջոցը, որովհետև հէնց իրենց ընտրած 100-ից 70 հոգի գլուխ բարձրացրին և արտայայտեցին իրենց բողոքն ու տրտունջը, իրենց դաստիարակող բարոյական ճիւաղների դէմ. բայց աւելի կտրուկ կերպով, հետևելով առածիս—«Որ ոչ լուիցէ ունկամբ, լուիցէ թիկամբ» որը այդ խաւարամիտների խալֆայական վարդապետութեան հիմնաքարն է (տես «Հայրենիքի» փետր. 28 №-ը—Կարապետ աբեղայ Տէր-Մկրտչեան և մանկավարժութիւն).... Այդ 70-ն ևս արտաքսեցան,որովհետև... «Աշխարհս սհենց քօռ ա, դիւղ մարդը պէտք ա մի լաւ ձի ունենայ թամքած, որ հէնց ճշմարտութիւնն ասի թէ չէ, նստի ու զոլ փախչի....» («Մոռացած աշխարհ» 8. ձուղուրեանի)։ Սա տրազեդիայի կատասարօֆն է միայն և ես յոյս ունիմ սրանով նրա ծագման ու զարգացման պատմութիւնը նկարագրել համառօտ կերպով։

Ինչ բերկրութեամբ, որ ամբողջ հայ ազգը ընդունեց Խրիմեանի կաթուղիկոսանալը, տասնապատիկ աւելի ցնծութեամբ սպասում էին նրան ճեմարանը, իր սաներով և մանաւանդ ուսանողներով, որովհետև նրա մէջ նրանք կարծում էին տեսնել իրենց ըղձերի իրագործողին, ճեմարանի մեծ բարեփոխիչին. այդպէս համոզուած էինք մենք. նրա գալստեանն էր սպասել տալիս մեզ, այդ ժամանակի մեր տեսուչ ս. Սեդրակեանը, որը չէր ուզում իր ինիցիատիւով մացնել ճեմարանում անհրաժեշտ բարեփոխութիւնները, (որոնք պահանջ էին դարձել Նահապետների աւերածութիւններից յետոյ) քանի որ մօտ էր «մեծ հայի» գալուստը...

Եկաւ Խրիմեանը, խոստացաւ բարեփոխութիւններ և անմիջապէս ձեռք զարնեց խոստումներն իրագործելու.—1) «Ցորենի հացի» տեղ «գարու հաց» տուեց մեզ (ս. Սեդրակեանին տեսուչութիւնից հանելով մի որ և էր Սարգիս եպիսկոպոս նշանակեց տեղը) 2) Կուրա-Մուրզային իր պաշտօնից հանեց (ռոճիկն իսկ կտրելով մասամբ) և մի Սողոմոն սարկաւագ դրեց տեղը. 3) Անպետքութեան համար արտաքսուած աստուածարան Ա. Տէր-Միքէլեանին վերահաստատեց իր պաշտօնում... Այս և սրանց նման բազմաթիւ վարմունքներով նա պարզ հայտնեցրեց, որ տարւայ վերջին պէտք է արձակի և ուսուցչական խումբը, որ բաւական յաջող կերպով կազմակերպուած էր Սեդրակեանի խաղաղ և խոհեմ կառավարութեան միջոցին և որը կարողացել էր գրաւել սաների սէրն ու համակրանքը իր օրինակելի անձնուիրութեամբ նուիրական ասպարիզում, հակառակ նախկին եռապետների պահպանողական ուսուցչական խմբերի....

Այդ բարեփոխութիւնների շարքում կարելի է դասել նաև երեք լսարանների միացման հարցը, որը սակայն Խրիմեանի ցանկացած լուծումը չստացաւ. բանից դուրս եկաւ, որ նա այդ քայլով ուզում էր երեք լսարանների ուսանողական այդ ժամանակուայ խմբից մի անգամից ազատել. իսկ թէ ինչով մենք՝ նրան անսասման յարգողներս և մոլեռանդութեամբ պաշտողներս արժանացանք նրա կողմից այդ յարգանքին—այդ կարող են բացատրել այն մի քանի լիրը և ցած-հոգի արա-

բրէք պարբերական չէ լինում. ոչ տեղական եկամուտ է ներկայում և ոչ էլ կարող է մի բանի ծառայել։

Մեզ այժմ դպրոցի մէջ. կան տղայք որոնք ամբողջ տարին մի քանի թերթ թուղթ դեռ չեն բերել և երբ ուսուցիչը պահանջում է—լաց են լինում, որովհետև քանիցս ուղել են ծնողներից և միմիայն նախատինք և յաճախ էլ ծեծ են ստացել։ Տարւայ մէջ չէ պատահել մի անգամ որ մի որ և է ծնող մտնէր դաս լսելու, իր տղայի մասին հետաքրքրուելու և կամ դրսումն իսկ՝ պարմապետին հարցնելու։ Հարցրէք այժմ նախկին հոգաբարձութիւնից և տեսէք ինչեր կը պատմեն ձեզ. մի ծնող, որ քէֆերի մէջ տասնեակ թուամաններ է շռայլում, երեք որդի կամ երկուսը ունի դպրոցում և տարեկան 5 թուման տալու համար ամիսներով բերել-տանել է տալիս հոգաբարձութեան դռնձահաւաքին։ Դպրոցը կառավարել է օտարականներից հաւաքած մուրացկանութեամբ, նա շարունակվում է դեռ նոյն կերպ կառավարել։ Ձեզ կը պատմեն այդ հոգաբարձուները, որ Ռուսաստանում իր որդու համար տարեկան 400 բուբլի ծախսող ծնողն, չը նայելով որ իր նոյն որդին միշտ ուղղւում է Հայկազեան դպրոցը, տարեկան 10 թուամանից աւելի տալ մերժում է. որովհետև այստեղ նա ստիպւած չէ վճարել, այլ թողւած է կամքի. այստեղ դպրոցը ոչ թէ տուրք է որ պահանջում է, թոշակ է որ առնում է ծնողներից, այլ շահիներ է որ ողորմութիւն է խնդրում, որ մուրում է։

Այդպիսով դպրոցի եկամուտները երեւոյն են լինում; երբեմն շատ և երբեմն քիչ, նայելով թէ հոգաբարձուները ազդեցիկ են լինում թէ թոյլ, եռանդուն են լինում թէ ծոյլ։ Մի բան որ մուրացկանութեան վրայ հիմնուած լինի, նա ոչ մի արդիւնք չի առաջացնիլ։ Ուրեմն, հարկաւոր է նախ, որ դպրոց յաճախող իւրաքանչիւր մանուկ հասկանար որ գալիս է դպրոց ուսանելու համար. երկրորդ որ նրան դպրոց տւող ծնողը ըմբռնէր թէ որդուն ուղարկում է ուսանելու, կրթուելու համար և հարկաւոր է այդ գործը իր տեսակցութեան գործերից մէկի կարգը անցկացնել, պարբերաբար հոգալ նրա մասին, պարբերական ծախս վճարել և հետաքրքրուել թէ ինչ են լինում իր վճարած փողի արդիւնքը։ Մուրացիկին տւած փողից հաշիւ չեն պահանջում, իսկ մի տեղ տւած տուրքով՝ հետաքրքրվում են, նրանից հաշիւ պահանջում։ Այդպէս էլ, եթէ իբր ողորմութիւն և զուռով է—ուզ անելով է որ փող են տալիս դպրոցին, իրենց մանուկը ուղարկում դպրոց՝—ինչպէս է որ չեն էլ հետաքրքրւի նրանով, հաշիւ չեն պահանջի հիմնարկութիւնից. մինչ եթէ իբր տուրք վճարեն պարբերաբար՝ նրանով կը հետաքրքրւեն, նրանց գործադրողներից հաշիւ կը պահանջեն։ Վ. Փ.

ՆԵՐԳԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԻՖԼԻՍԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻՆ

Անցեալ նոյեմբեր մէկին ես և պ. Աւ. Ալբերեանը Թէհրան եկանք որպէս ուսուցիչ Հայկազ. դպրոցի։ Մեզ հրաւիրեց Թիֆլիսում պ. Հ. Առաքելեանը, Թէհրանցի Յովհաննէս խան Մասէհեանի նամակի հիման վրայ։ Այդ պարոնը հրաւիրում էր որպէս թէ Հոգաբարձութեան կողմից։ Թէհրան գալով, մենք գտանք որ հոգաբարձութիւնը փող չունէր մեզ վճարելու և մինչև իսկ (որպէս մասնաւոր կերպով ասւեց) պ. Մասէհեանը մեզ հրաւիրել է ոչ նոր հոգաբարձուների պատւէրով, այլ միայն իր ցանկութեամբ։ Պարզ է որ դիմեցինք պ. Մասէհեանին։ Պարոնը ինձնից խռովեց, որովհետև իրենից ռոճիկ պահանջեցի և իրեն պատասխանատու ճանաչեցի։ Եթէ մասնաւոր դաս չը գտնէի, ուտելու հաց չը պիտի ունենայի։ Ես պատմում եմ պարզութեամբ ամեն ինչ, որպէս զի Թէհրան եկող ուսուցիչը կարողանայ գաղափար կազմել թէ որպիսի պայմանների մէջ է որ նա մտնելու է։ Մասնաւոր դասերն ու «Շաւիղին» աշխատակցելը ինձ ապրեցրին մինչև այժմ—սա պարզ է, իսկ պ. Ալբեռեանի յաջողւեց գտնել մի դաս՝ մի փոր հացի համար—այդ էլ վատ չէր։

Այսպէս մենք դպրոցը տարանք մինչև փոխանորդ վարդապետի Թէհրան գալը։ Ես մի ուրիշ ժամանակ առիթ կունենամ մանրամասն պատմելու մեր մի տարւայ պաշտօնավարութեան պատմութիւնը։ Նա շատ հետաքրքիր է և կը թիչ, մանաւանդ այլանդակ դէպքերով։ Փոխանորդ հայրը ընտրեց հոգաբարձութիւն և այդ հոգաբարձութիւնը, միայն այսօր, երբ մաշւեցինք փող ուզելով, վճարեց միայն իմ ռոճիկները։

Չը մոռանամ ասել որ քիչ մնաց մեր ճանապարհածախսի մի մասը չը կամենային վճարել (մինչև այժմ չեն վճարել) և 10 թուման համար պ. Մասէհեանը ուրացել է որ ինքը շտապեցրել է մեզ գալու, որ և ստիպել է մեզ փութով գալով՝ քիչ աւելի ծախս անել։

Անմիտ պիտի լինել պնդելու համար որ Թիֆլիսից այստեղ 20 թուումանով (մօտ 35 ր.) կարելի է գալ։

Ինչ որ է. ես մանրամասնութիւնների մէջ առայժմ չեմ մտնում, Յետոյ կը պատմեմ և յոյս ունեմ որ «Շաւիղը» կը տպի։ Միայն ինձ հետ չէ որ Թէհրանցիք այդպէս են վարվում. պատմում են որ մեզնից առաջ եղող Բ. Ատամանեան ուսուցչին այն դրութեան են հասցրել որ նա ստիպւել է հէնց ուսման սկզբին մի պաշտօն գտնել և հեռանալ. իսկ Յակովբ Ղազարեանին այնքան ռոճիկ չեն աւել, որ Զատիկ օրով՝ ուտելու հաց, մի կոպէկ փող չեն ունեցել, իսկ նրա ռոճիկից 25 թուման մինչև այսօր էլ չեն տւել։

Դեռ շատ բաներ են պատմում. դը բանք յետոյ. ես այժմ գրեցի այս, որ զգուշացնեմ Թէհրան գալ կամեցող ուսուցիչներին և խորհուրդ տամ հետեւեալները։ 1) Ով որ հրաւիրում է նրան, նոտարական կերպով պայման կապել, որ եթէ Թէհրանում փող չը ստանայ, պայման կատարողը վճարի։ 2) Ամենաքիչ 250 թուումանից պակաս ռոճիկով չը գալ։ Որովհետև այդ գումարով իսկ՝ միայն խեղճութեամբ կարելի է ապրել Թէհրանում։ 3) Մասնաւոր դասերի վրայ յոյս դնել միայն այն դէպքում, երբ եկողը լաւ ֆրանսերէն գիտենայ։ 4) Գալիս հետը ունենայ գոնէ մի քանի հարիւր բուբլի, որ Եթէ ռոճիկը ուշ վճարեն՝ քաղցած չը մեռնի գոնէ։ 5) Եթէ չէ կարող լռել գիտնալ, կեղտոտութիւններ տեսնել և աչք փակել... մի խօսքով «վարել» մանաւանդ «ամենախոնարհաբար» հնազանդել, թող չը գայ որովհետև սաստիկ կը հալածւի։ 6) Ճանապարհածախս պահանջել անպատճառ 60 բուբլի ռուսաց փողով, պահանջել նոյնպէս ետ դառնալու համար, եթէ բան է տարւայ կիսին ստիպւեց թողնել դպրոցը։

Եւ մանաւանդ զինւել համբերութեամբ ու անտարբերութեամբ։ Իսկ «լաւ ուսուցիչ» համարւելու համար գրքից կտորներ անգիր անել տալը բաւական է. աշակերտներն իսկ այնքան ոսվորել են դրան, որ երբ ուսուցիչը խօսում է բերանացի—դասը պատմում, բողոքում են և գտնում որ ուսուցիչը դաս տալ չը գիտէ։ Այդպիսի սքանչելի արդիւնքը Թէհրանցիք պարտաւոր են իրենց մէջ վաղուց ի վեր թառած մի մեծ թուչունի, մի նշանաւոր խալֆայի, որ կոչվում է Յ. Դասպարեան։ Թէհրան եկող ուսուցիչը թող աչքի առջև ունենայ այդ հիդրային էլ։ Այս իմ խորհուրդներն են։ Գիտեմ որ Թէհրանցիք սաստիկ նեղանալու են ինձնից. նրանք արդէն ինձ չեն էլ սիրում և նոր նեղանալը ոչինչ նշանակութիւն չունի. իսկ եթէ ասածներիցս մէկը կարող են ջրել և կամ սխալ գտնել, ասպարէզ եմ կոչում այդպիսուն. փաստերդ շատ և

բածները որոնք բացի լրտեսութիւնից և գաւառանութիւնից ուրիշ ոչ մի արդար գործի ընդունակ չեն, և որոնք գժբաղդաբար մեր ընկերներն են եղել, նրանք մեզ սև գոյներով նկարել շտապեցին Խ.-ի առաջ տարածելով մեր մասին անլուր և անամօթ զրպարտութիւններ, իբր թէ մենք անասուած, անբարոյական, հակավարչական և անկրօններ ենք. ինչպէս նաև ուսուցչական խմբին, որոնց գաւառանն էլ հէնց իրենց միջից էր (ասասուածարան լինելով հանդերձ)։

Խրիմեանը հաւատաց այդ ամենին, որովհետև այդ ձեռնտու էր իրեն. նա չէր սիրում ազատամտութիւնը տեսնել բուն դրած ուսանողների մէջ. նա կոյր հպատակութիւն էր պահանջում մեզնից, որ դարձեալ հին նուազածութեամբ պարէինք.... Կործանեցին մեր յոյսերը, ի չիք դարձան ոսկէ երազները, թունաւորւեց մեր խաղաղ ընկերական անմեղ կեանքը շնորհիւ մի քանի անազնիւների, որոնք իրենց ընկերների զրպարտութեան և գաւառանութեան զնով արժանացան զրկարաց ընդունելութեան հայոց հայրիկից և նոյն իսկ հոգևոր կոչումն ընդունեցին և այդ բարոյապէս փչացածներն ու լրբերը մեզ պիտի դատեցարակեն իրրև հոգևոր հայրեր ?!!!

Մասնաւոր էին քննութեան միջոցները, Խրիմեանի սպառնալիք—մեզ արձակել—տարաւամ դրութեան մէջ էր դցել մեզ ուսանողներիս։

Բայց այդ սրբազան տեսուչն (Սարգիս եպիսկոպոսը) նա հաստատում էր թէ քննութիւններից յետոյ մեզնից շատերին, ինչպէս և պատարանցիներից, պէտք է արտաքսեն, որ ճեմարանը խաղաղի։ Ոչ մի միջնորդութիւն, խնդիրը չազդեցին կաթուղիկոսի վրայ և մենք ստիպւած Նրանից վճռական պատասխան խնդրեցինք մեր վիճակի մասին, նախ քան քննութիւնների սկսելը. պատասխանն այս եղաւ. «Սպասեցէք քննութիւններուն, անկէ ետքը ես ձեզի կը պատասխանեմ, եթէ չիք համբերեր, հայդէ՞ դացէք, ճեմարանի դռները բաց են։» Մենք անմիջապէս հետեւեալ խնդիրը ներկայացրինք կաթուղիկոսին՝

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ Տ. Տ. ՄԿՐՏՉԻ Ա. ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԽՆԴԻՐ Հ ԽՍՏԻՐ

Մեր հարցին թէ՝ պահելու էք մեզ թէ արձակելու, Ձերդ վեհափառութիւնը պատասխանեց «պիտի սպասէք մինչև քննութիւնների վերջը ապա թէ կը պատասխանենք ձեզ. իսկ էթէ չէք կարող քաղաքել՝ թողէք ճեմարանը և գացէք». Պատիւ ունենք խոնարհաբար յայտնել Ձերդ Վեհափառութեան, որ մեր ներկայ պայմաններում, անկարող ենք սպասել մինչև քննութիւնների վերջը, ուստի խնդրում ենք օրհնէք մեզ և հրամայէք ում հարկն է, պատրաստել մեր վկայագրերը, որքան կարելի է շուտ, որովհետև այժմեան հանգամանքներում մի օրն անգամ թանկ է մեզ համար։

Ձերդ Վեհափառութեան խոնարհ որդիք՝ Բ. լսարանի ուսանողներ. (11 ստորագրութիւն) Ա, լսարանի ուսանողներ.(11 ստորագրութիւն)

Մենք դեռ այնքան լաւատես էինք, որ յոյս չունէինք թէ Խրիմեանը կընդունի մեր խնդիրը, բայց դու մի ասիլ նա հէնց դրան է եղել սպասում. ուստի անմիջապէս հրամայում է պատրաստել մեր վկայականները։ Սակայն ուռանների խումբը զոհ չէր, որ մենք խաղաղ թողնում ենք ճեմարանը, անվնաս կերպով. նրանք նզում էին մեզ վռնդւած տեսնել և դրա համար ոչ մի միջոց չը խնայեցին.—

Այսպէս Սարգիս եպիսկոպոսը հրամայեց ճեմարանի կօշկակարին մեր ոտներից հանել. Զատկին բաժանած նոր կօշիկները, հանդերձապահին—չը տալ մեզ նոր ամառւայ շորեր, այլ հինը թողնել, խիստ կոպիտ էր վարվում մեզ հետ, ամեն արդելք դնում էր, որ չը կարողանանք Կաթուղիկոսին ներկայանալ։ Վերջապէս ի վերջ այս ամեն խայտառակութիւնների—ճեմարանի հիմնադրի, մեր բարերարի վերջին հոգեհանգստի և հրաժեշտի ժամանակ հրապարակաւ, կոպտաբար տրվելից մեզ ճառ խօսել, վախենալով խայթելուց... Այս ամենից պարզ է. որ նրանք ուզում էին մեզ վրդովացնել, վրդովել և բորբոքել, որ ուղղակի կռիւ գցենք, որպէսզի առիթ ունենան մեզ վկայականներ չը տալ և վռնդել. ս. տեսուչը պատրաստի վկայականները չը բաժանեց, մինչև որ կառքերը դրանք պատրաստ չէին կանգնած.... Բայց մենք այդ ամենը հանդարտութեամբ և լռութեամբ տարանք, զգալով մեր արդարացի վրէժխնդրութեան և բարկութեան կիրքը, յանուն ճեմարանի անզորրութեան և գոյութեան...

(Կը շարունակուի)

...ան մէնիմ։
Հայկազեան գպրոցի ուսուցիչ եղած
...ն 1894—95 տարեշրջանում՝
Վ. Փափազեանց

ԲԱՑ ՆԱՄԱԿ

...վկասից Սալմաստ գալ ուզող ուսու-
ցիչներին

—

Սալմաստի՝ անունով միայն, թեմա-
...ն տեսուչ Մ. Աւետիսեան, դեռ ևս
...բրեկան քննութիւնները չէ վերջա-
...ած, շտապել է Կովկաս՝ եկող 95—96
...ուսումնական տարուայ համար ուսու-
...ներ հրաւիրելու։

Թերևս գտնուին միամիտ մարդիկ, ո-
...ք անծանօթ լինելով ներկայ տարուայ
...ալմաստի՝ հայ ժողովրդի և ինքնակոչ
...ուսուչ Մ. Աւետիսեանի մէջ եղած կը-
...ուներին, «թեմական տեսուչ» մեծա-
...մբիւն տիտղոսից շլացած, հաւատան
...Աւետիսեանի խօսքերին և շտապեն պայ-
...ենաւորուիլ Աւետիսեանի հետ։

...գրական պարտաւորութիւն ենք հա-
...մարում զգուշացնել՝ այն ուսուցիչներին
...ոնք ցանկութիւն ունեն Սալմաստում
...ուսուցիչ լինելու, որ թեմական տեսուչ
...մարուած Մ. Աւետիսեանը, Սալմաստի
...ուսուչ չէ...

Սալմաստի 7 նշանաւոր գիւղերից—
...լասարը, Սաւրան, Մահլամը, Սառ-
...ան, Ախտրխանան դեռ անցեալ փետր-
...ար ամսին—(ներկայ տարուայ) բողոքա-
...եր են ներկայացրել թէ իրան, և թէ
...արպատականի թեմական առաջնորդին,
...րով ժողովուրդը պահանջում է հեռաց-
...նել թեմական տեսչութիւնից Մ. Աւե-
...տիսեանին, որը միանգամայն անյարմար
...իր կոչման և պաշտօնին։ Սակայն Ա-
...րպատականի առաջնորդը մինչև օրս էլ
...իւղացիների այդ արդարացի պահանջը
...ողել է անհետևանք, չը նայելով, որ
...ուսումնական տարուայ վերջը լինելով,
...անհրաժեշտ է հէնց այժմեանից եկող
...ուայ պատրաստութիւնը տեսնել—
...ժանաւոր ուսուցիչներ հրաւիրել և
...ներկայ Փայտջուկի՝ ժամագործ, Հաւ-
...ասանի՝ դուրգեար (հիւսն), Մահլամի՝
...պզի և Սաւրայի՝ պատկերահան ուսու-
...իչների նմանները։ Մ. Աւետիսեանը
...եմական տեսուչ է լոկ Ատրպատականի
...առաջնորդի՝ Պարզեանի և Սալմաստի
...ջորդի՝ Վ.հունիի համար։ Սալմաստի
...այ ժողովուրդը կշտացել է ձեզանից
...Աւետիսեան, շնորհ տարէք, հեռա-
...եք Սալմաստից քաշի դեռ շուտ է...
...թէ չէ խօ գիտէք, որ ժողովուրդը անո-
...ք է... նա Հէյնէլի համբերող գազանն
...է...

Նշտար

Դաւրէժ

ՆԱՄԱԿ ԴԱՎՐԷԺԻՑ

—

27 ապրիլ 95

«Շաւիղի» № 13 համարում գրած էր «Գրպ-
...ոցական բարեսիրական» ընկերութեան հա-
...իւների մասին, նախ՝ թէ ընկ. անդամներն
...ասել են 240 թ. դրամագլուխ ունի ընկ. երկ
...որդ՝ թէ ինչու համար հաշիւներն յունիս
...ամսից է գրուած և ոչ թէ յունուարից։ Թէ-
...պէտ վարչութիւնս պարտաւոր չէ ընկ. ան-
...դամներից բացի ուրիշ մարդու հաշիւ տալ
...սակայն ի նկատի ունենալով որ աշխատիսի ա-
...մեն մի անթափառիչ ու սիրալ տեղեկութիւն կա-
...րող է ընկ. վարկը ձգել այդ պատճառով վար-
...չութիւնս խնդրում է որ զանվ մի փոքր ան-
...կիւն շնորհք ձեր լրագրում մեր բողոքին։

Ընկ. անդամներից և ոչ մինն չէ գտնում
թէ ընկ. 240 թ. դրամագլուխ ունի, այլ
ընդհ. ժողովի օրն վարչութիւնս յայտնած էր
թէ, թէպէտ մինչ այս տարի միջին հաշուով
տարեկան 47 թուման զուտ արդիւնք է ունե-
ցել ընկ. բայց յոյս ունինք որ յառաջիկայ
տարի կարողանանք 100—110 թ. զուտ արդ-
իւնք ունենալ, որ այն ժամանակ ընկ. դրամ-
ագլուխն կը լինի 240—250 թուման։

Գալով թէ ինչու համար է որ յունիսից է
հաշիւ տրուած վարչութիւնս կը պատասխանէ
թէ՝ որովհետև անցեալ աշնուայ յունիս ամսին
ընդհ. ժողով է կայացել և նոր վարչութիւն
կազմուել և այն ժամանակ հաշիւները փակուել
են և յանձնուել նոր վարչութեան թէպէտ այդ
հաշիւն լրագրութեան միջոցաւ չէ յայտարա-
րուած. (1895 յունիս ամսոյ սկզբում ընկ. դր-
ամագլուխն է եղած 87 թուման) այդ պատ-
ճառաւ էլ վարչութիւնս յարմար դատեց փո-
խանակ նոյնվարից հաշիւ տալու յունիսից
սկսած հաշիւ տալ։

Ի զիմաց վարչութեան նախագահ՝
Վարդան Վարդանեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Այս համարից սկսած տալում ենք ձե-
մարանի անկարգութիւնների մասին, նրա
ուսանողներից մէկի ընդարձակ յօդուա-
ծը, որ շատ շահագրգիռ է։ Արտաքս-
ուած աշակերտները այժմ Թիֆլիսումն
են և այնպիսի թշուառ գրութեան մէջ,
որ նրանց համար լրագիրներն են ոկսել
հանդանակութիւն անել։ Մենք էլ ու-
բախութեամբ կընդունենք նրանց՝ հա-
մար ուղարկած նուէրները. հարկաւոր է
ոգնել այդ թշուառ հալածուածներին,
ճշմարտութեան զոհերին։

—

Թերթիս գլխաւոր աշխատակիցը իր
Եւրոպա գնալու պատճառով քաղաքից
բացակայ է լինելու մի քանի ամսով։
Նա այսօր մեկնում է դէպի Կովկաս։

—

Դաւրէժից գրում են որ Սուքիաս ե-
պիսկոպոսը հեռանալու միտք չունի և
այդ՝ զայրացնում է ժողովրդին։ Ի դէպ
է ասել որ Կ. Պոլսի «Հայրենիք» լրա-
գիրը, նուիրելով մի Խառաջնորդալ այդ
եպիսկոպոսի համար, ի շարս այլոց ա-
սում է «Երբ հոգևոր վարչութիւն մը
խնդալով, կատակարանելով Սուքիաս
Պարզեանց մը առաջնորդ կը կարդէ,
այսպէս կատակը կը փոխուի ողբերգու-
թեան»։ Յօդուածագիրը յիշում էր որ «երբ
Պարզեանց Երևանի թեմը կը կառավա-
րէր, բազմաթիւ ողորմելի, խեղճ, ողէտ
անձեր քահանայ ձեռնադրեց ամեն մէ-
կին բուական կլոր գումար մը առնե-
լով։» Այս էլ խօ մենք չենք։

—

Նոյն «Հայրենիք» թերթը, Սուքիաս
Պարզեանցի համար հաղորդում է այս-
պիսի գայթակղեցուցիչ դէպք եր № 1145-
ում «Երկու օր առաջ կառավարութիւնէն
մարդ (Ֆարրաշ) ուզեց գիտէք ինչու,
զբաղէս գի ասաջնորդարանին մէջ տղու
Ֆալաֆելոս չարնել ասաց... որովհետև
10 հատ Ֆասուլակ գտալ վերուցեր էր։»

—

Դաւրէժից գրում են որ հայոց ա-
ռաջնորդարանը գնել է Սալմաստի Հաֆ-
տավան գիւղը։ Եթէ այդ լուրը ճիշտ է և
գիւղը եղել է ազգային կալուած (վախֆ)
այն ժամանակ լսելանում ենք մեր գո-
վասանքը այդ գործը անողին, լինէր
նա նոյն իսկ Սուքիաս եպիսկոպոսը։ Դա
մի շատ լաւ քայլ է և Հաֆտավանը մեծ
օգուտներ կունենայ այդպէս գրութիւ-
նից, ի նկատի ունենալով պարսկական
հողային գրութեան բէժիմը։

—

Հայկազեան գպրոցի քննութիւնները
շարունակվում են։ Լսում ենք որ եկող
տարուայ համար նոր այնպիսի ուսուցիչ-
ներ են հրաւիրվում, որոնք «վարել
գիտենան»։ Այդ բառերի միտքը լաւ ըմ-
բռնելու համար հարկաւոր է կարդալ
մեր թերթի № 6-ի առաջնորդողը, իսկ
նոր գալիք ուսուցիչներին խորհուրդ
կը տայինք կարդալ այս համարի մէջ
տպուած պ. Վ. Փափազեանի յօդուածը։

—

Դաւրէժից մեզ գրում են, որ «Սեպ-
զգեստների համագումար է այստեղ։
Ներկայումս 6 հատ հոգևորականներ—
մէկ եպիսկոպոս և 5 վարդապետներ,
Դաւրէժումն են. թէ ինչու համար,
մեզ համար անբացագրելի է... հաւաք-
ածներն են Սալմաստի՝ Վեհունի, Խա-
չիկ և Սարգիսեան Եսայի և Նախավկայի
Աբրահամ վարդապետները։

—

Ռաշտից պ. Ա. Մարդարեանը «Շա-
ւիղի» մի օրինակ յուլիս 1-ից նուիրում
է Վերին Ագուլիսի հայոց դրադարանի։

—

Այդ օրերս Թէհրանի Հայկազ. գպրո-
ցում պատահեց մի դէպք, որ չարժէր
արձանագրել, եթէ խնդրի մէջ չերևէին
մի քանի հասարակական գործողների
կեղտերը։ Խնդիրը այն էր, որ քննու-
թիւնների օրը, քննութիւնից փախան
Բ. դասարանի 6 այնպիսի աշակերտներ
որոնք իրենց բարքով յայտնի էին։ Բայց
նոանք ոչ միայն փախան, այլ և մի
նամակ են գրել փոխանորդ հօրը, որով
դանդատվում են որ իրենց պատմու-
թեան դասատու պ. Վ. Փափազեանցը բե-
բանացի է դաս տուել դասերը (այսինքն
կենդանի խօսքով առանց անգիր անել
տալու) և որ նա կրօնաւորնելի դէմ է
խօսում և այլն։ Աշակերտների այդ ընդ-
թացքը թելադրել է նոյն իսկ դպրոցի
նորընտիր հոգաբարձուներից մի քանի-
սից և բողոքը խմբագրել է հոգա-
բարձութեան գրագիր անդամը։ Ահա
հէնց այդ վերջին կէտն է որ զայրոյթ
է շարժում. սքանչելի է այն հոգաբար-
ձութիւնը և սքանչելի գործեր պիտի
տեսնի նա եթէ այդպիսի գրգռող և ա-
շակերտներին լիմարացնող անդամներ
ունի իր մէջ։

—

Ընթերցասիրաց ընկերութեան գրա-
դարանի գանձապահը, չը նայելով մեր
բազմիցս հրապարակային հրաւէրին,
չը բարեհաճեց դեռ հաշիւ տալ. ինչ է
մտածում պարոնը լսմառելով. չէ՞ որ
իր այդտեսակ լռութեամբ կարող է կաս-
կածի տեղիքներ տալ։ Ի դէպ է այս-
տեղ ասել, որ փոխանորդ հօր հոմանա-
ւորութեամբ տուած երեկոյթի հաշիւն
անգամ դեռ տրուած չէ։ Հարկաւոր է
հաշիւ տալ, ազգարարում ենք վերջին
անգամ։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ,

ՆԱՄԱԿ ԿՈՎԿԱՍԻՑ

—

Բաթում 20 ապրիլ 95

Բաթումի գործարաններում գործը այնչափ
շատ է, որ մինչև անգամ կիրակի և տօն օ-
րերն իսկ աշխատեցնում են բանւորներին,
այն էլ ոչ միայն մէկ կամ երկու կիրակի, այլ
3 ամսից ի վեր շարունակ ամեն կիրակի,
մինչև անգամ կան այնպէս գործարաններ,
ուր բացի կիրակիներից, քառասդ կամ օրուկէս
են աշխատեցնում, այսինքն առաւօտից ժամը
6-ից մինչև գիշերուան 8-ը կամ 10 ժամը նա-
յած գործարանի գործերի պահանջին և այդ-
չափ ժամերի միջոցում խեղճ բանւորները մի-
այն մի ժամ, ցերեկուան 12-ից մինչև մէկը ի-
րաւունք ունին ազատ լինելու, թէ ճաշելու և
թէ հանգստանալու համար։ Մէկ երկու տարի
առաջ բանւորները ժամուկէսով ազատ էին
ճաշելու համար, բայց վերջերումս բարեհոգի
գործարանատէրերը և կառավարիչները այդ
ժամուկէսը շատ համարելով կէս ժամուան ա-
զատութիւնը խլեցին. չէ՞ որ կէս ժամում մի
քանի ատամնակ բուրլիներ աւելի արդիւնք
են ունենում. ուրեմն այս հաշուով Բաթումի
բանւորների մի մասը օրական 11-ից մինչև
15 ժամ շարունակ աշխատելուց, շարունակ
այսչափով աշխատող մարդիկ ինչու պիտի չը
հիւանդանան կամ ինչու չը պիտի մեռնեն,
բայց դրանց հիւանդութիւնը կամ մահը գոր-
ծարանատիրոջ հոգը չէ, նրանից ոչինչ չի
պակասիլ. կը հիւանդանայ մէկը կը գայ միւ-
սը, կը մեռնի երկուսը, կը ծնեն մի քանիսը
բանւորներ լինելու համար, չարչարելու,
պանջելու համար, որ պահեն իրենց խղճալի
գրութիւնը։

Ռուսաց օրէնքով իրաւունք չունին գործա-
բանատէրերը և վաճառականները կիրակի և
տօն օրերում իրանց գործակատարներին և
բանւորներին աշխատեցնելու, բայց Բաթումում,
ինչպէս երևում է այս օրէնքը գործադրութիւն
չի ունեցել, չունի և չի էլ ունենալ։ Գործ-
բանների և բանւորների ինչպէս և ինչ չափով
աշխատեցնելու համար էլ օրէնք չը կայ, ա-
մեն ինչ թողնուած է գործարանատէրերի բա-
րեհայեցողութեան, ինչպէս, ինչ չափով էլ
աշխատեցնելու համար անսահման իրաւունք-
ներ են վայելում։ Նոյն իսկ Կովկասեան թեր-
թերում վաղուց է, որ բանւորների այս տր-
խուր դրութեան վերաբերութեամբ նպաստիչ
մի բան չի գրուում։ Եթէ «Արձագանքը» պար-
տաւորութիւն է համարում գրել թէ բարձրա-
գոյն հրամայված է, որ մարտի 26-ին.....
(«Արձագանքի» № 34-ի մանր լուրերում պէտք
է կարդալ) ինչու ուրիշ ժամանակ չի գրում թէ
բարձրագոյն հաստատուած օրէնքի հիման հա-
կառակ այս ինչ առևտրական տները կամ գոր-
ծարանները կիրակի օրերը աշխատեցնում են

սիպմամբ բանուորներին. արդեօք. այդ մասին «Արձագանքի» հետ միւս խմբագրութիւնները լուր չունեն կամ իրենց թղթակիցները միշտ ականատես լինելով հանդերձ ոչինչ չեն գրում. ես կասեմ որ թէ լուր ունեն և թէ այդ մասին ոչ միայն թղթակցութիւններից այլ հէնց բանուորներից թղթակցութիւններ լինում են, բայց որովհետև իրանց շահերին ձեռնտու չէ նրա համար չի տպագրւում:

Շատ անգամ պատահում է, որ բանուորները չափազանց աշխատելուց յոգնում են, մէկ կամ երկու օր հանգստանալու, կազդուրուելու համար չեն գնում աշխատելու, երրորդ օրը գործարանում իրանց տեղերից դրկւում, առանց գործի են մնում, և կամ եթէ նորից սկսում են աշխատելու նոյն շաբաթուան աշխատած փոքի մի մասը գործարանի կառավարչից կամ գործակատարից իրրև տուգանք չեկած օրերի համար յետ է դրւում յօգուտ չ'գիտեմ գործարանատիրոջ թէ գործակատարի. տուգանքներ առնելու կողմից շատ քաջ է Մանթաշեանի գործարանը, նրանից յետոյ Ռոշելդինը. այդ տուգանքների քանակութիւնը բանուորների օրական վարձի քանակութեամբ է որոշւած. այսպէս, եթէ բանուորը ստանում է 80 կոպէկ օրական, ուրեմն մի չեկած օրուան համար տուժում է 80 կոպէկ, իսկ եթէ մէկ բուբլի է՝ մէկ բուբլի տուժում: Բացի այդ պատճառից տուգանք են առնում և մի քանի ուրիշ դէպքերում, օր. եթէ բանուորը ծուռ է մամլել մի կոտոր թիթեղ. կամ անապը լաւ չի միացրել. թիթեղները լեցուած արկղը լաւ չի սրբած. տախտակեայ սնդուկներից մէկի մեխը ծուռ է խփած, այս ամենի համար տուգանք է առնում. վերջապէս մի կոպէկանոց սխալի համար խեղճ բանուորները բուբլիներ են տուժում բայց եթէ բանուորը աշխատած ժամանակ ձեռը կտրի կամ մատները մամուլի տակ փշրի, գործարանատէրը գոնէ մինչև լաւանալը նրա օրական հացը չի ապահովցնում: Ասում են Մանթաշեանցի գործարանում մի կորսուած փայտանեկի համար, որը հազիւ արժէ մի բուրլի, 24 մարդից 24 բուբլի տուգանք են առել. և երբ գտնուել է այդ կորսուած փայտանեկը, առնուած տուգանքը յետ չէ դարձուած և այս իրողութիւն պիտի լինի, որովհետև Մանթաշեանցի գործարանում այդ տեսակ բաներ անելու շատ ընդունակ է յայտնի պ. Կոստին.: Սայլապաններից (դրօկչիկ) էլ տուգանք են առնում բոլորովին անտեղի. որովհետև 8 օրը մի անգամ փող են վճարում, ուստի միշտ 15 բուբլի կամ աւելի, սայլապանների վարձը մօտներն է. երբ ազատ սայլապանը իր սեփական ձիով, իր սեփական սայլով չը ցանկանայ այլևս իրանց սնդուկները նաւահանգիստ տեղափոխել, չեն տալ մի շաբաթուան վարձը, թէև այդ տեսակ պայման բացի չունենալուց, մինչև անդամ, խընդրել են էլ որ իրենց եաշչրկները տեղափոխի. առաջ խնդրում են բերում, վերջը փողը չեն տալ ու կը ծեծեն: Այո կը ծեծուին էլ: Ես գիտեմ մի սայլապան որ իր 16 ր. 50 կոպէկը պահանջելուն համար երկու անդամ ծեծուել էր Կոստիից, ճարահատած սայլապանը խնդրագրով Մանթաշեանցին դիմեց և խընդրեց իր քրտինքի գինը, նրանից էլ բացատրեց: Ի հարկէ եթէ Մանթաշեանցը չը քաջալերի նրա ծառայողները այդ բացատական քաջութիւնները չեն կործել. ինչու չը քաջալերի, չէ որ այդ տեսակ դրկանքները յօգուտ իրեն են. եթէ չը դրկուի բանուորը՝ չի ունենալ Մանթաշեանցը. եթէ չը ծեծուի, չը նիհարանայ սայլապանը, չի հատանալ, փորը չի ուռչիլ Մանթաշեանցի: Կեցցէ բարեկեցութիւն, փառք և պատիւ որ դրկանքների կոյտերի վերայից է բարձրանում:

Մանթաշեանցի գործարանում ծեծելու հետ հայհոյել էլ լաւ գիտեն. նախ չը մոռանամ ասել, որ գործակատարներից մէկին շատ ծեծել էր Կոստին, որովհետև այդ գործակատարը չէր համաձայնել ստորագրելու այն թղթի վրայ, որը ուղարկելով կաթուղիկոսին տեղիս յայտնի տէր Կոստանդինի համար խաչ և ծիրանի վերարկու բերել տուեց: Յետոյ, թող Աշտարակի յայտնի հայհոյողները աշակերտ մտնեն Մանթաշեանցի գործակատարների մօտ, Ատուածը վկայ, իրենց գիտեցածը կը մոռանան:

Բարեկենդանին ասած միւս հայ գործարաններում, օր. Ծովհաննեանի, և Խաչատրեանցի գործարանատերում այդ տուգանքները ծեծը և հայհոյանքը չը կան, մանաւանդ առաջինում: Այդ գործարանում կառավարիչը և գործակատարները բանուորների հետ վերաբերվում են ինչպէս իրենց նման մարդոց հետ, շատ քաղաքավարութեամբ. եթէ բանուորը սխալ էլ գործի, որը շատ քիչ է պատահում, երկու երեք անդամ զգուշացնում են. երբ տեսնում են անընդունակ է, քաղաքավարութեամբ հեռացնում են: Ծովհաննեանի գործարանում աւելի դրկուած են գործակատարները քան թէ բանուորները. ռոճիկ քիչ են ստանում. գոնէ այնչափ վճարեն, որ եթէ ոչ լաւ, գոնէ միջակ կերպով ապրելու բաւականայ. բացի դրանից Խոջամիրեանցը (Ծովհաննեանների Բախումի առևտրական տան կառավարիչը) ինչպէս ասում են, (մեղքը ասողի վիզը) երբեմն վիրաւորում է գործակատարներին, թէև քիչ յետոյ զղջում է և աշխատում մոռացնել, բայց այդ էլ լաւ չէ. պէտք է մտածել որ քիչ զղացում ունեցող մարդը երբէք չի ներել մէկին, անտեղի վիրաւորելու իրեն: Ասում են բարի է Խոջամիրեանցը, բայց կրքոտ. մի հին դեղ գիտեմ կրքի դէմ և խորհուրդ կրտամ Խոջամիրեանցին գործածել. երբոր պիտի կրքոտի թող մէկից մինչև հարիւրը համարէ, որով երկու տեսակ օգուտ կստանայ. մէկ այն որ կրքոտած ժամանակ չի վիրաւորիլ ուրիշին, միւսն էլ այն որ ջիղերը չեն գրգռվիլ և առողջ կը մնայ:

(Կը շարունակուի)

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Գերմանիայում վախճանուել է յայտնի վիպասան և մեծ ժողովրդականութիւն վայելող Գիւստաւ Ֆրէյտագը 80 տարեկան հասակում. նրա նշանաւոր գրուածքն է «Նախահայրեր» և «Պատկերներ գերմանական անցեալից» նկարագիրները:

—Անգլիայում կանայք իսկ սկսել են համակրութիւն ցոյց տալ հայկական հարցին, աչքի առջև ունենալով «ընդհանուր, մարդկային տեսակէտը»:

—Մայիսի 1-ի գործաւորական տօնախմբութիւնները Բերլինում և Փարիզում հանդիստ անցաւ: Միայն Պէշտում, կարմիր դրոշակ բռնելու համար, ոստիկանութեան և բանուորների մէջ ընդհարումն տեղի ունեցաւ:

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Լոնդոն. 24 մայիս (Ն. տ.) Լորդ Սալիզբիւրի՝ իր Բրատֆորդում խօսելու ժամանակ, ակնարկեց նաև Սասնոյ բարբարոսութիւնները և հաւատացրեց որ այդ հարցի մասին եղած խօսքերը լոկ խօսքեր կը մնան եթէ անգլիական կառավարութիւնը ոյժի չը դիմէ հայկական հարցի լուծում տալու համար. հակառակ դէպքում աւելի լաւ կը լինէր լռել:

Լոնդոն. 25 մայիս, Այստեղ հասած լուրերի համեմատ Ֆորմոզան հանրապետութիւն է հռչակել և Թունգ փոխ կառավարիչը նշանակուել է հանրապետութեան նախագահ: Կղզու անկախութիւնը յայտարարուած է միւս կառավարութիւններին:

Լոնդոն. 28 մայիս. Լուր է հասնում որ ժապոնական նաւատորմը մօտեցել է Թամսինին, որ Ֆորմոզա կղզու գլխաւոր նաւահանգիստն է. սպասվում է շուտափոյթ կռիւ.—Իտալական կառավարութեան խնդրանօք՝ Աբիսսինեա զէնք մտցնելը արգելուել է Սոմալիի եզերքի նաւահանգիստներից Միմելիք թագաւորի հետ ունեցած թշնամութեան համար:

Լոնդոն. 26 մայիս: Արևելքում Ռուսիայի և Ժապոնիայի յարաբերութիւնները զարմանալի կերպով լուրջ կերպարանք են ստանում: Լուր է հասնում որ Ռուսիան շատ մռտիկ քաղաքական յարաբերութիւններ է հաստատում Կորեայի հետև ուզում է պահանջել որ Ժապոնիան դուրս քաշի այդ երկրից իր զօրքերը:

Գահիրէ. 27 մայիս. 21 հատ անգլիական պատերազմական նաւեր հասել են Ալէքսանդրիա. Ծովապետ Սէյմուրի հրամանատարութեան ներքոյ: Պատրաստուել է տօնախմբութիւն՝ նաւատորմիղի այդտեղ անցկացնելու օրերի համար:

Լոնդոն. 29 մայիս. Խաղաղականի փոստային նաւը Մէքսիկոյի մօտ փշրուել է. խեղդուել են 170 անձ, ազատուել 19:

Բերլին. 26 մայիս. Գերմանական բանկերների Կոնֆերանսը վճռեց բողոքել դրամական օրէնքներից ոևէ մէկի փոփոխութեան դէմ, որ լինելու է յօգուտ արծաթի: Վճռեցին նոյնպէս բողոքել Գերմանիայի մտադրութեան դէմ մասնակցելու ոևէ դրամական կոնգրէսի:

Ընտանատէր—Հրատարակիչ՝
ԱՆԴՐԷԱՍ ԲԷԿՆԱԶԱՐԵԱՆՑ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

"ՀԱՆԴԷՍ ԱԹՈՅՈՐԵԱՅ„

ԲԱՐՈՅԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԵՒ ԱԲԻՆՅՅԱԳԻՏԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ

«Հանդէս» առաջիկայ տարին կը հրատարակուի նոյն ծաւալով աւելի ճոխ և բազմակողմանի բովանդակութեամբ:

Բաժանորդագինն և այլ ամենայն պայմանք նոյն կը մնան:

Կը խնդրենք մեր բաժանորդներէն օր յառաջ նորոգել բաժանորդագրութիւնը, դիմելով մեր գործակալութեանց: Հրատարակվում է Վիէննայում Մխիթարեան միաբանութեան խմբագրութեամբ:

Բաժանորդագին տարեկան 10 ֆրանկ

Հասցէ. Rédaction de la Revue «Hantess» Au Couvent des RR. PP. Méchitharistes à Vienne (Autriche) VII/2 Mechitharistengasse 4.

3—3

ՓՈՐԱՃՃՈՒԻ (որ կոչվում է ժապաւինաւոր որդ) (Solitaire Tenia) **ԴԷՄ ԹԻՍՏ ԱԶԴՈՒ ԴԵՂ**

Փորձած «Շաւիղի» խմբագրութիւնից և զօրութիւնը երաշխաւորած: Դեղը 3—4 ժամւայ ընթացքում ԶԳՈՒՄ Է ՃՃՈՒԻ ԳԼՈՒԽԸ և լիովին ազատում նրանից: Ոչ մի լեղիութիւն չունի. հարկաւոր չէ ոչ լուծողական և ոչ էլ ծոմապահութիւն: Հարկաւոր եղած պատուէրները գրաւոր կրպով կուղարկվեն դեղի հետ: Դեղը փոշի է: Գինն է Մէկ թուման (2 բուբլի): Դիմել Թէհրան, Մահտեսի Յորդանան Եղեազարեանցին. Téhéran (Perse) M. Hordanan Eliazarian: Պատուէրները կատարվում են անմիջապէս և խնամքով:

2—3

„ԾԱՂԻԿ„

ԿԻՍԱՄՍԵԱՅ ՀԱՆԴԷՍ

ազգային գրական և քաղաքական

Խմբագիր՝ Արշակ Զօպանեան

Հրատարակվում է Կ. Պոլսում. Տարեկան բաժանորդագինն է 40 ղրուշ:

Հասցէ. Constantinople Mr. A. Tchobanian. Tchacmactchilér. Hakopian Khan № 9.

ՀԱՐԻՒՐԱՄԵԱՅ ՀԱՅ

ԼՐԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՏԿԵՐՆԵՐԻՑ

Ծախվում են խմբագրութեանս մէջ

Գինն է Թէհրանում վեց ղրան իսկ Պարսկաստանի օտար քաղաքների համար 8 ղրան